ԱՇՈՏ ՄԱՐԿՈՍՅԱՆ
ՀՀ Կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի տեղակալ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ԲՈՐԻՍ ԱՎԱԳՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու

ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԿԱՊԻՏԱԼՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Համաշխարհային տնտեսության միասնացումը և համագործակցության խորացումը դրսևորվում են նաև ազգային և օտարերկրյա կապիտալների ներթափանցման և դրանց համատեղ գործունեության ոլորտում: Հայաստանի Հանրապետության նման փոքր և բաց տնտեսություն ունեցող երկրներում օտարերկրյա կապիտալը ունի ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմեր, որոնց հանրագումարում դրանք դառնում են զարգացման մարտահրավերներ, ուստիև պետք է կարողանալ հաստատել այնպիսի հարաբերակցություն, որի դեպքում հնարավոր կդառնա երկկողմանի դրական առավելագույն արդյունքի ապահովումը: Քննարկվել են ՀՀ-ում ՀՆԱ կառուցվածքն ըստ հատվածների և բաշխվածությունն ըստ վերահսկողության հատկանիշի (պետական, ազգային մասնավոր և օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող), ինչպես նաև գնահատական է տրվել դրանց հնարավոր փոփոխությունների և հարաբերակցության վերաբերյալ:

Հիմնաբառեր. *ազգային կապիտալ, օտարերկրյա կապիտալ, պետական կազմակերպություն, ազգային մասնավոր կազմակերպություն, օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող կազմակերպություն*

JEL: F20, F21, F36, F39, E22

Համաշխարհային ֆինանսատնտեսական վերջին ճգնաժամը (2008) ցույց տվեց, որ աշխարհում առանձնացված և մեկուսացված պետություններ գոյություն չունեն: Համաշխարհային ճգնաժամից տուժեցին առանց բացառության բոլոր պետությունները՝ ինչպես գերիսկա, այնպես էլ փոքր: Հետևաբար՝ պետք է կարողանալ դասեր քաղել անցյալից, որպեսզի նոր սխալներ թույլ չտրվեն: Նման պայմաններում յուրաքանչյուր պետության կառավարության համար առաջնահերթ խնդիր է դառնում ունենալ ոչ միայն խելամիտ միկրո- և մակրոտնտեսական քաղաքականություն, այլև այդ ամենը կառուցել՝ ելնելով արտաքին շուկաների պահանջներից կամ, ինչպես ընդունված է անվանել, մեգաէկոնոմիկայից: Փորձագիտական առանձին գնահատականների համաձայն՝ հատկապես փոքր երկրների համար արտաքին շուկաներն ունեն վճռական նշանակություն. 70–80%-ով կանխորոշում են կառավարության վարած տնտեսական քաղաքականության հաջողությունը: Ըստ էության, ասվածից հետևում է, որ, ելնելով արտաքին շուկաներից և դրանց պահանջներից, պետք է ձևավորել ազգային տնտեսության կառուցվածքը և թողարկվող սպառողական արժեքները: Միայն այդկերպ է հնարավոր ապահովել ազգային տնտեսության մրցունակությունը և արտահանման ծավալների ավելացումը: Նշված խնդիրն առանձնապես կարևորվում է Հայաստանի Հանրապետության համար, քանի որ վերջին տարիներին ներմուծումը գերազանցում է արտահանումը 2.2–4.7 անգամ: Եթե 2009 թվականին ՀՀ առևտրի հաշվեկշիռը կազմել է -2611,0 մլն ԱՄՆ դոլար, ապա 2010 թվականին՝ -2771,4 մլն ԱՄՆ դոլար, ըստ որում՝ 2009 թվականին արտահանման ծավալը կազմել է 710,2 մլն ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը, ըստ ապրանքի ծագման երկրի՝ 3321,1 մլն ԱՄՆ դոլար (արտահանման նկատմամբ գերազանցման չափը՝ 4,7 անգամ): 2010 թվականին այդ ցուցանիշներն էին, համապատասխանաբար՝ 1011,4 մլն ԱՄՆ դոլար, 3782,9 մլն ԱՄՆ դոլար, 3,7 անգամ[1]: 2011 թվականին ՀՀ-ից ապրանքների արտահանումը հասնում էր 1134,3 մլն դոլարի, իսկ ներմուծումը՝ 4145,3 մլն դոլարի (արտահանման նկատմամբ գերազանցման չափը՝ 3.7 անգամ)[2]: 2012–2015 թվականներին այդ ցուցանիշները կազմել են, համապատասխանաբար՝ 1380,2 մլն դոլար, 4261,2 մլն դոլար, 3,1 անգամ, 1478,7 մլն դոլար, 4385,9 մլն դոլար, 3,0 անգամ[3], 1547,3 մլն դոլար, 4424,4 մլն դոլար, 2,9 անգամ, 1486,9 մլն դոլար, 3254,0 մլն դոլար, 2.2 անգամ[4]: ՀՀ վճարային հաշվեկշռի տվյալներով «Ապրանքների և ծառայությունների» կրեդիտ հաշիվը 2011 թվականին կազմել է 2742,18 մլն դոլար, դեբետ հաշիվը՝ 4917,83 մլն դոլար, նշված հաշիվների տարբերությունը՝ -2175,65 մլն դոլար, որից «ծառայությունները»՝ -65,8 մլն դոլար (կրեդիտ՝ 67,33 մլն դոլար, դեբետ՝ 78,35 մլն դոլար): Այդ ցուցանիշները 2012–2015 թվականներին կազմել են, համապատասխանաբար. 2012 թվականին՝ 2917,90 մլն դոլար, 5131,38 մլն դոլար, -2213,48 մլն դոլար, -101,57 մլն դոլար (1402.19 մլն դոլար, 1503,77 մլն դոլար), 2013 թվականին՝ 3155,89 մլն դոլար, 5364.97 մլն դոլար, -2209,08 մլն դոլար, -116,82 մլն դոլար (1520,03 մլն դոլար, 1636,85 մլն դո-

[1] Տե՛ս Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2010 թվականի հունվար-դեկտեմբերին, Տեղեկատվական ամսական զեկույց, Եր., ՀՀ ԱՎԾ, 2011, էջ 120–125:
[2] Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., ՀՀ ԱՎԾ, 2014, էջ 445:
[3] Տե՛ս նույն տեղը, 2015, էջ 442:
[4] Տե՛ս Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2015 թվականի հունվար-դեկտեմբերին, Տեղեկատվական ամսական զեկույց, Եր., ՀՀ ԱՎԾ, 2016, էջ 116:

լար)[5], 2014 թվականին՝ 3318,90 մլն դոլար, 5467,70 մլն դոլար, -2148,80 մլն դոլար, -93,40 մլն դոլար (1620,75 մլն դոլար, 1714,15 մլն դոլար), 2015 թվականին՝ 3139,74 մլն դոլար, 4357,44 մլն դոլար, -1217,70 մլն դոլար, -63,83 մլն դոլար (1513.32 մլն դոլար, 1577,15 մլն դոլար)[6]:

Այստեղից էլ հետևում է, որ արտահանման ավելացման հիմնախնդրի լուծման գործում անգնահատելի կարող է լինել դրսի օտարերկրյա կապիտալի օժանդակությունը հայրենական տնտեսությանը: Եթե նկատի ունենանք, որ ՀՀ տնտեսությունը, փոքր լինելով հանդերձ, ունի արտաքին շուկաներ մտնելու և դրանցում ամրապնդվելու խնդիր, որի լուծման համար պահանջվում են հսկայական միջոցներ, ապա օտարերկրյա կապիտալի դերակատարությունը դառնում է «փրկության» կարևոր միջոցներից մեկը:

Մյուս կողմից՝ օտարերկրյա կապիտալի մուտքը ազգային տնտեսություն միանշանակորեն չի ընդունվում՝ առաջին հերթին ազգային մասնավոր կապիտալի կողմից: Շատ հաճախ լայնածավալ օտարերկրյա կապիտալ ընդգրկած կառավարությունները մեղադրվում են «երկիրը օտարներին վաճառելու» գործարքի համար: Նման մոտեցումների հեղինակները ազգային «բուրժուազիայի» և, հատկապես, ազգայնական ներկայացուցիչներ են: Օտարերկրյա և ազգային մասնավոր կապիտալների միջև պայքարը մերթընդմերթ թեժանում և թուլանում է: Խելամտությունը հուշում է, որ լավագույն իրավիճակն այն է, երբ օտարերկրյա և ազգային մասնավոր, ինչպես նաև պետական կապիտալները փնտրում ու գտնում են համագործակցության եզրեր՝ հանուն ընդհանուր շահերի: Այնուհանդերձ, ելնելով երկրի առջև կանգնած սոցիալ-տնտեսական խնդիրներից, ինչպես նաև երկրի ներսում ընթացող հատկապես քաղաքական գործընթացներից, պետք է հայրենական և օտարերկրյա կապիտալների միջև ստեղծել այնպիսի հարաբերակցություն, որից կշահեն այդ գործընթացի բոլոր կողմերը:

Համաշխարհային շուկայում զգալի հաջողություններ ձեռք բերելու համար անհրաժեշտ է նաև տարածաշրջանային համագործակցություն և անդամակցություն այս կամ այն տնտեսական միությանը կամ մի քանիսին[7]: Միայն այդկերպ ազգային և օտարերկրյա կապիտալների, ինչպես նաև համագործակցության տարբեր գործիքների միջոցով հնարավոր կլինի բարձրացնել ազգային տնտեսության մրցունակության, հետևաբար նաև բնակչության բարեկեցության մակարդակները:

Օտարերկրյա կապիտալը ինչպես համաշխարհային, այնպես էլ ազգային տնտեսություններում հանդես է գալիս ամենատարբեր ձևերով և միջոցներով, որոնցից հիմնականը վերազգային կորպորացիաներն են (ՎԱԿ):

Ազգային տնտեսություններում օտարերկրյա կապիտալի ներթափանցման տնտեսական լծակների (ուղղակի, պորտֆելային և այլ ներդրումներ), կապիտալ արտահանող և օտարերկրյա կապիտալ ներգրավող երկրների տնտեսական շահերի, ՎԱԿ-երի խոշորացման ձևերի (առաջին հերթին՝ միաձուլումների և կլանումների միջոցով) ու դրանց առավելությունների, ինչպես

---

[5] Տես Հայաստանի Հանրապետության արտաքին հաշիվները, Եր., ՀՀ ԱՎԾ, 2015, էջ 14:

[6] Տես Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թվականի հունվար-փետրվարին, Տեղեկատվական ամսական զեկույց, Եր., ՀՀ ԱՎԾ, 2016 թ., էջ 97–98:

[7] Թեև ՀՀ-ը 2015 թ. հունվարի 1-ից անդամակցում է ԵԱՏՄ-ին, սակայն ներկայումս շարունակվում են քննարկումները և շփումները ԵՄ-ի հետ՝ այդ կառույցի հետ նոր ձևաչափով աշխատելու և համագործակցության նպատակով:

նաև այլ հիմնահարցեր խորությամբ և մասնագիտական բարձր մակարդակով հետազոտել են բազմաթիվ հեղինակներ[8]:

Օտարերկրյա կապիտալի ավելացումն այս կամ այն երկրում, առաջին հայացքից, օգտակար է թվում ինչպես ներդրող, այնպես էլ ընդունող երկրների տեսանկյունից: Սակայն հաճախ օտարերկրյա կապիտալը, փորձելով նվազեցնել ռիսկերը, ամեն կերպ ջանում է ազդել ընդունող երկրի ներքին և արտաքին քաղաքականության վրա: Այս պատճառով էլ օտարերկրյա կապիտալի ընդլայնումը ընդունող երկրում շատ հաճախ (և հատկապես փոքր երկրում) արժանանում է ընդունող երկրների ազգային ընկերությունների և կառավարությունների դժգոհությանը: Կապիտալ արտահանող երկրում ևս այդ երևույթը ընդունում են որպես կապիտալի արտահոսք, ինչը հանգեցնում է այդ երկրներում աշխատատեղերի կրճատման կամ նվազեցման, պետական բյուջե մասհանումների նվազեցման և, վերջիվերջո, տնտեսության սոցիալ-տնտեսական ներուժի թուլացման: Այսինքն՝ օտարերկրյա կապիտալի շարժը, չնայած իր դրական կողմերին, հաճախ ինչպես ներդրող, այնպես էլ ընդունող երկրներում հանդիպում է լուրջ դժգոհությունների և հակազդեցությունների: Այնպես որ՝ այս կամ այն երկրում օտարերկրյա կապիտալի ընդունումն ունի իր առանձնահատկությունները, առավելությունները և թերությունները, իսկ դրանց հետևանքները միշտ չէ, որ միայն դրական կամ բացասական են և հասարակության մեջ միարժեք չեն ընկալվում և ընդունվում:

Ազգային և օտարերկրյա կապիտալների փոխհարաբերակցության վերաբերյալ վիճակագրական ու տեղեկատվական հիմք է համարվում ազգային հաշիվների համակարգը (ԱՀՀ), որը կազմված է իրար հաջորդող փոխկապակցված հաշիվներից, որոնք ներառում են մի շարք դասակարգումներ, հայտնի չափով կազմում են համակարգի հիմքը և թույլ են տալիս ընդգրկել տարբեր հասկացություններ, ինչպիսիք են կառուցվածքային միավորները և հատվածները:

Կառուցվածքային են համարվում տնտեսական այն միավորները, որոնք ընդունակ են տիրապետելու ակտիվներին և իրենց անունից ստանձնել պարտավորություններ: Դրանք կարող են զբաղվել գործառնությունների բոլոր տեսակներով և դառնալ որոշումներ ընդունելու կենտրոններ: Կախված իրենց հիմնական գործառնություններից, վարքից և նպատակից՝ կառուցվածքային միավորները խմբավորվում են ըստ հիմնական կառուցվածքային հատվածների: Հատվածը, իրագործվող գործառնությունների և ֆինանսավորման աղբյուրների տեսանկյունից, միատարր կառուցվածքային միավորների համակցություն է:

Տարբերակվում են ազգային տնտեսության հետևյալ հինգ հատվածները.

- ոչ ֆինանսական կազմակերպություններ (կորպորացիաներ),
- ֆինանսական կազմակերպություններ (կորպորացիաներ),
- պետական կառավարման մարմիններ,
- տնային տնտեսություններ սպասարկող ոչ առևտրային կազմակերպություններ (ՏՏՍՈԱԿ),
- տնային տնտեսություններ:

---

[8] Տե՛ս **Ա. Մարկոսյան, Գ. Նազարյան, Դ. Հախվերդյան,** Միջազգային տնտեսական հարաբերություններ: Ուսումնական ձեռնարկ երկու մասով, Եր., ԵՃՇՊՀ, 2012, մաս 2, գլուխ 2. Միջազգային կորպորացիաներ, էջ 84–151: **Դ. Հախվերդյան, Է. Համբարձումյան,** Միջազգային կորպորացիաներ, Եր., «Տնտեսագետ», 2015, էջ 41–45, 47–48:

Ոչ ֆինանսական կազմակերպությունները կառուցվածքային միավորներ են, որոնք գլխավորապես զբաղվում են շուկայական ապրանքների և ոչ ֆինանսական ծառայությունների արտադրությամբ:

Ֆինանսական կազմակերպությունները կառուցվածքային միավորներ են, որոնք հիմնականում զբաղվում են ֆինանսական միջնորդությամբ կամ օժանդակ ֆինանսական գործունեությամբ:

Պետական կառավարման մարմինները կառուցվածքային միավորներ են, որոնք իրենց քաղաքական գործառնությունների իրականացմանը և տնտեսության կարգավորման դերին զուգընթաց, արտադրում են առավելապես ոչ շուկայական ծառայություններ անհատական կամ կոլեկտիվ սպառման համար, ինչպես նաև վերաբաշխում են եկամուտներն ու հարստությունը:

Տնային տնտեսություններն սպասարկող ոչ առևտրային կազմակերպություններն իրավաբանական անձինք են, որոնք գլխավորապես զբաղվում են տնային տնտեսությունների համար ոչ շուկայական ծառայությունների արտադրությամբ: Դրանց կարգավիճակը թույլ չի տալիս այդ կազմակերպությունները գրանցող միավորների համար լինել եկամտի, շահույթի կամ այլ ֆինանսական շահի աղբյուր: Այդ կազմակերպությունների հիմնական միջոցները գոյանում են տնային տնտեսությունների կամավոր մուծումներից:

Տնային տնտեսությունն անձանց ոչ մեծ խումբ է, որոնք բնակվում են միևնույն կացարանում, միավորում իրենց հարստությունը և եկամուտը կամ դրա մի մասը, միասին սպառում են ապրանքների և ծառայությունների որոշ տեսակներ, հիմնականում՝ կացարանը և սննդամթերքը: Տնային տնտեսությունների հատվածում ներառված միավորները մասնակցում են արտադրությանը՝ տրամադրելով իրենց աշխատուժը և շուկայում ձեռք են բերում ապրանքներ ու ծառայություններ: Բացի դրանից, տնային տնտեսությունները երբեմն մանր, ոչ կորպորատիվ ձեռնարկությունների (ֆերմաներ, ընտանեկան ռեստորաններ, խանութներ և այլն) սեփականատերեր են: Նման ոչ կորպորատիվ ձեռնարկություններն արտադրում են ապրանքներ և ծառայություններ՝ շուկայում վաճառքի, ինչպես նաև, մասամբ, սեփական սպառման համար: Ոչ կորպորատիվ ձեռնարկությունների գործունեության ֆինանսական արդյունքը խառը եկամուտն է, որը ներառում է ինչպես շահույթի, այնպես էլ աշխատանքի վարձատրության տարրեր:

Վերը թվարկված հատվածների փոխադարձ կապն այլ երկրների հետ արտացոլելու նպատակով ձևավորվում է պայմանական հատված՝ «արտերկիր», որը միավորում է բոլոր կառուցվածքային միավորները՝ ոչ ռեզիդենտներին այն մասում, որտեղ դրանք փոխհամագործակցում են ազգային տնտեսության ռեզիդենտների հետ[9]:

Վերը թվարկածներից ոչ ֆինանսական և ֆինանսական կազմակերպությունների հատվածները ստորաբաժանվում են ըստ առևտրային կամ շուկայական ծառայություններ մատուցող ոչ առևտրային կազմակերպությունների նկատմամբ վերահսկողություն իրականացնող կառուցվածքային միավորի տեսակի: Ոչ ֆինանսական և ֆինանսական կազմակերպությունների հատվածները բաղկացած են երեք ենթահատվածներից՝

- պետական կազմակերպություններ (կորպորացիաներ),
- ազգային մասնավոր կազմակերպություններ (կորպորացիաներ),

[9] Տե՛ս Հայաստանի ազգային հաշիվները, Եր., ՀՀ ԱՎԾ, 2010, էջ 240-241, 2014, էջ 309-310:

– օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող կազմակերպություններ (կորպորացիաներ):

Իրականում ԱՀՀ-93-ն առաջարկում է պայմանականորեն ընդունել, որ կառուցվածքային միավորը վերահսկում է այս կամ այն կազմակերպությունն այն դեպքում, երբ դրա վերահսկողության կամ տրամադրության տակ են գտնվում կազմակերպության ավելի քան 50%-ը և ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերը (այն պայմանով, որ տվյալ կազմակերպության վերահսկման այլ ապացույցներ բացակայում են, քանի որ որոշ դեպքերում վերահսկողություն կարելի է իրականացնել համապատասխան փաթեթի կեսից զգալի քիչ մասի ձեռքբերման դեպքում):

Համաձայն վերը նշված մեթոդաբանության՝ Հայաստանի 2000 թ. ԱՀՀ վերամշակման արդյունքներով, ՀՆԱ ծավալը, հիմնական գներով, տարանջատվել է նաև ըստ ոչ ֆինանսական և ֆինանսական կազմակերպությունների ենթահատվածների՝ հիմնված կանոնադրական կապիտալում դրանց հիմնադիրների բաժնեմասի վերաբերյալ տեղեկատվության վրա, որը ստացվել է ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրից:

Եթե կանոնադրական կապիտալում մասնակցել են բոլոր երեք տեսակի հիմնադիրները, ապա կառուցվածքային միավորը դասակարգվել է ըստ այն տեսակի, որն ունի ամենամեծ բաժինը: Իսկ եթե հիմնադիրների բաժնեմասերը հավասար են (50–50), ապա՝

– պետական և ազգային մասնավոր բաժնեմասերի հավասարության դեպքում կազմակերպությունը դասակարգվել է որպես պետական,
– պետական և օտարերկրյա բաժնեմասերի հավասարության դեպքում՝ որպես պետական,
– օտարերկրյա և ազգային մասնավոր բաժնեմասերի հավասարության դեպքում՝ որպես օտարերկրյա[10]:

Տնտեսության ամբողջական պատկերը ստանալու համար ամբողջ համախառն ավելացված արժեքը, գործունեությունը վերահսկելու հատկանիշից ելնելով, կարելի է ներկայացնել հետևյալ երեք մասերով՝ պետական, ազգային մասնավոր և օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող:

Այսպես՝ «պետական կառավարման մարմինների» հատվածի համախառն ավելացված արժեքը դասվում է պետական մասին, «տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների» և «տնային տնտեսությունների» հատվածների համախառն ավելացված արժեքը՝ ազգային մասնավոր մասին: «Ոչ ֆինանսական կազմակերպությունների» և «ֆինանսական կազմակերպությունների» հատվածների համախառն ավելացված արժեքը բաշխվում է դրանց ենթահատվածներին համապատասխան[11]:

ՀՆԱ-ն, որպես հիմնական մակրոտնտեսական ցուցանիշ, երկրի տնտեսության բազմաշերտությունը կարող է բնութագրել տարբեր տեսանկյուններից: Դրանցից մեկը վերաբերում է ՀՆԱ արտադրությանն ըստ տնտեսության հատվածների և արտաքին աշխարհի հետ տնտեսական հարաբերությունների արդյունքի (այլ կերպ ասած՝ արտաքին առևտրի մնացորդի (սալդո)): Այսինքն՝ ՀՆԱ արտադրությունն ըստ տնտեսության հատվածների բնութա-

[10] Տե՛ս նույն տեղը, 2010, էջ102, 2014, էջ 93:
[11] Տե՛ս նույն տեղը, 2014, էջ 101:

գրում է այդ արդյունքի ձևավորման ինչպես ներքին, այնպես էլ արտաքին հնարավորությունները: Շատ հաճախ այդ ցուցանիշի օգնությամբ բնորոշվում է տնտեսության ներքին փոփոխությունների դինամիզմը, ինչպես նաև արտաքին աշխարհի հետ տվյալ երկրի առնչությունները: Վերջիններս ցույց են տալիս նաև այդ երկրի տնտեսության բացությունը և դրա ազդեցությունը ՀՆԱ արտադրության վրա: Բացի այդ, ՀՆԱ արտադրությունն ըստ տնտեսության հատվածների բացահայտում է նաև առանձին հատվածների դերն ու նշանակությունը, ինչպես նաև դրանց փոփոխությունների «առաջադիմականությունը» կամ «հետադիմականությունը» և դրանց ազդեցությունները ՀՆԱ արտադրության ծավալների ու շարժի վրա: Այսպես՝ եթե ՀՆԱ արտադրության գործում մեծանում է պետական կառավարման մարմինների կշիռը, ապա դա չի կարելի առաջադիմական համարել, քանի որ դրանով մեծանում է տնտեսության և գործարարության վրա պետության վարչական ռեսուրսի և բյուրոկրատիայի ազդեցությունը: Ինչ վերաբերում է, օրինակ՝ ՀՆԱ արտադրության գործում ոչ ֆինանսական կազմակերպությունների և դրանց գործունեության ազդեցությանը, ապա եթե 1990-ական թվականներից մինչև 2008 թ. (մինչև համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը) ճիշտ էր համարվում տնտեսության այդ հատվածի կշռի նվազումը և «ֆինանսական կազմակերպություններ» հատվածի աճը, ներկայումս առավել տարածված է հակառակ տեսակետը: Դա հիմնավորվում է այն հանգամանքով, որ նաև «ոչ ֆինանսական կազմակերպությունների» հատվածում են ստեղծվում իրական բարիքները, երկրորդ ֆինանսական «փուչիկները» ձևավորվում են ֆինանսական կազմակերպություններում, որոնք էլ անբավարար ֆինանսատնտեսական հսկողության և անկատար գործիքակազմի պատճառով ստեղծում են շուկայական անհավասարակշիռ իրավիճակ, որն էլ հանգեցնում է տնտեսական ճգնաժամի: Ակնհայտ է նաև, որ նախկին համայնավարական երկրները, որոնց տնտեսությունը ձևավորվել և կայացել էր սոցիալիստական տնտեսության կազմակերպման սկզբունքներին խիստ համապատասխան, շուկայական տնտեսության և դրա հիմքերի կայացման ընթացքում պետք է կրեին լուրջ և հիմքային փոփոխություններ ինչպես տնտեսության ներքին կառուցվածքում, այնպես էլ արտաքին աշխարհի հետ առևտրատնտեսական հարաբերությունների ժամանակ: Ըստ որում, այդ փոփոխությունները անցումային տնտեսությունների մեծ մասի համար միաժամանակ իրականացան բավական բարդ սոցիալ-տնտեսական, քաղաքական, ինչպես նաև տարածաշրջանային դժվարությունների և կորուստների պայմաններում: Ամենահիմնական դժվարությունը, որը նախկին համայնավարական երկրներին դրեց ծանր դրության մեջ, տասնամյակների ընթացքում ձևավորված տնտեսական կապերի վերացումն էր, որն էլ այդ երկրների տնտեսություններում ստեղծեց կաթվածահար վիճակ: Հին առևտրատնտեսական կապերի կորուստը և նոր շուկաների բացահայտումը ժամանակ և զգալի ռեսուրսներ էին պահանջում: ՀՀ պարագայում անցումն ազատ շուկային ձևավորվեց հարևան երկրի հետ առճակատմամբ (պատերազմ), հարևան երկու երկրների (Թուրքիա և Ադրբեջան) կողմից տնտեսական շրջափակմամբ, ինչպես նաև 1988 թ. Սպիտակի երկրաշարժով, որի հետևանքով հանրապետության արտադրական ներուժը պակասեց 1/3-ով, զոհվեց շուրջ 30 հազար մարդ, հարևան երկրից փախստականների թիվը հասավ շուրջ 350 հազարի և այլն: Այլ կերպ ասած՝

Խորհրդային Հայաստանի անցումը շուկայական հարաբերությունների ուղեկցվեց այդ անցումը «ծանրացնող» բազմաթիվ հանգամանքներով:

ՀՀ ՀՆԱ արտադրության՝ տնտեսության հատվածների և կառուցվածքի 1990–2012 թթ. ժամանակահատվածի[12] տվյալներից[13] հետևում է, որ.

- ՀՆԱ արտադրության գործում ոչ ֆինանսական կազմակերպությունների կշիռը նվազել է 24.1 տոկոսային կետով՝ 1990 թ. 73.2%-ից 2012 թ. հասնելով 49.1%-ի,
- ավելացել է ֆինանսական կազմակերպությունների կշիռը՝ 0.4%-ից հասնելով 4.5%-ի (աճը՝ ավելի քան 11 անգամ),
- պետական կառավարման մարմինների կշիռը 1990–1992 թթ. ավելացել է 0,6 տոկոսային կետով, մինչև 2009 թ. նվազել է՝ հասնելով 5.8%-ի, որից հետո նորից ունեցել է աճման միտում՝ 2009 թ. կազմելով 8.4%, իսկ 2013-ին՝ 8,0%,
- էական փոփոխություն չի կրել «տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպություններ» հատվածը (1990 թ. 0.2%-ից 2012 թ. կազմել է 0.3%),
- «տնային տնտեսությունների» հատվածն ունեցել է անընդհատ աճի միտում և 1990–2012 թթ. ժամանակահատվածում ավելացել է 20,7 տոկոսային կետով,
- «ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայությունների» հատվածն աճել է 13.5 անգամ՝ 1990 թ. -0.2%-ից 2012 թ. հասնելով 11.5%-ի:

Հայաստանի երրորդ հանրապետության տնտեսության անցած ժամանակահատվածում իրականացված բարեփոխումների արդյունքում փոխվեց երկրի տնտեսակարգը. համատարած պետական սեփականությունը փոխարինվեց հիմնականում մասնավոր և խառը սեփականատիրական հարաբերություններով: Ըստ որում, այդ երևույթի բնորոշ կողմը դրա լայն ընդգրկվածությունն ու խորությունն էր: Կարևոր փոփոխությունների ուղղությունները վերաբերում էին առաջին հերթին ոչ ֆինանսական (օրթոդոքս տնտեսագետների ձևակերպմամբ՝ նյութական արտադրության ոլորտին) հատվածին, ինչպես նաև ֆինանսական (ոչ նյութական ոլորտին) հատվածին:

ՀՀ տնտեսության վերը նշված երկու ամենախոշոր հատվածների, ինչպես նաև տնտեսական գործունեության տեսակների՝ ըստ սեփականության ենթահատվածների (պետական, ազգային մասնավոր, օտարերկրյա վերահսկողությամբ) ցուցանիշների փոփոխությունները 2000–2012 թվականների նյութի ներկայացումը երեք փուլերի միջոցով պայմանավորված է պաշտոնական վիճակագրության կողմից ՀՆԱ՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների տարբեր դասակարգումներով:

Համապատասխան տվյալների[14] ուսումնասիրությունից հետևում է, որ 2000 թ.՝ ըստ սեփականության ենթահատվածների ամենախոշոր փոփոխությունը նկատվում է գյուղատնտեսության բնագավառում: Ոլորտում իրականացված՝ հողի և գյուղատնտեսական տեխնիկայի մասնավորեցման արդյունքում պետական սեփականության բաժինը կազմել է 4.2%, ազգային մասնա-

[12] 2015-ի «Հայաստանի ազգային հաշիվները» լույս չի տեսել, այդ պատճառով էլ տվյալները վերաբերում են 2012-ին:
[13] Տե՛ս Հայաստանի ազգային հաշիվները, Եր., ՀՀ ԱՎԾ, 2009, էջ 62, վերջին, 2014, էջ 63:
[14] Տե՛ս նույն տեղը, 2006, էջ 104–106, 2003, էջ 84–86:

վորի բաժինը՝ 95.8%, իսկ օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող սեփականությանը՝ 0%: Այս հանգամանքը, երբ օտարերկրյա կապիտալը հետաքրքրություն չի ցուցաբերում գյուղատնտեսության հիմնական արտադրության միջոցի՝ հողի նկատմամբ, առաջին հերթին պայմանավորված է իրավական պատճառներով: Բանն այն է, որ թեև ՀՀ առաջին սահմանադրության հոդված 28-ում նշված է. «Յուրաքանչյուր ոք ունի սեփականության և ժառանգման իրավունք», սակայն «Հողի սեփականության իրավունքից չեն օգտվում օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի»[15]: Նույն ձևակերպումը տեղ է գտել նաև ՀՀ երկրորդ[16] և երրորդ[17] սահմանադրություններում: Նշենք նաև, որ այդպես էլ չունեցանք նաև «բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերը»: Նման մոտեցումը *անկասկած անհնար* կամ *գոնե անհնար է* դարձնում հողի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերումը օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար:

Այլ կերպ ասած՝ գյուղատնտեսության հիմնական միջոցը և դա վերամշակող տեխնիկական միջոցներն անցան ազգային մասնավոր սեփականատերերին (գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններին), որոնք ֆինանսական միջոցների պակասի պատճառով չեն կարողանում լիարժեք օգտագործել զգալի մեծությունների հասնող հողային ռեսուրսներ (այդ թվում նաև գյուղատնտեսության ամենաթանկ ռեսուրսը՝ վարելահողերը):

2004 թ. դրությամբ օտարերկրյա կապիտալը մուտք չէր գործել ինչպես գյուղատնտեսության, այնպես էլ ձկնաբուծության և անտառտնտեսության ոլորտներ: Եթե 2000 թվականին ՀՀ-ում տնտեսական գործունեության 21 տեսակներից միայն 8-ում էին նկատվում օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող տնտեսական գործունեության տեսակներ, ապա 2004-ին՝ 14-ում: Ըստ որում, եթե ոչ ֆինանսական հատվածում պետական սեփականության ենթահատվածի բաժինը կազմել է 19.5%, ազգային մասնավորինը՝ 64.0%, օտարերկրյա սեփականությանը՝ 16.5%, ապա այդ ցուցանիշները 2004-ին կազմել են, համապատասխանաբար՝ 13.8%, 64.5% և 21.7%, այսինքն՝ օտարերկրյա վերահսկողության բաժինն ավելացել է 5.2 տոկոսային կետով, պետականը նվազել է 5.7, իսկ մասնավոր ազգայինն ավելացել է 0.5 տոկոսային կետով: Այդ ցուցանիշները ոչ ֆինանսական հատվածի կազմակերպություններում 2004 թ. կազմել են. պետականում՝ 15.5% (2000 թ. համեմատությամբ նվազել է 26.9 տոկոսային կետով), ազգային մասնավորում՝ 40.9% (աճը՝ 16.5 տոկոսային կետ), օտարերկրյա սեփականությանը՝ 43.6% (աճը՝ 10.4 տոկոսային կետ): Այսինքն՝ ոչ ֆինանսական հատվածի նկատմամբ ֆինանսական հատվածի սեփականության անցումը ոչ պետական սեփականատերերին իրականացվել է ավելի արագ տեմպերով:

Վերլուծության տվյալներից[18] պարզ է դառնում, որ ոչ ֆինանսական հատվածի ավելացված արժեքում պետական սեփականության ենթահատվածի բաժինը 2005 թ. 10.3%-ից 2010-ին հասել է 7.0%-ի, ըստ որի, ազգային

---

[15] Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրություն, Եր., «Նաիրի», 1995, էջ 15:
[16] Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրություն (փոփոխություններով), Եր., «Տիգրան Մեծ», 2005, էջ 16:
[17] Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրության փոփոխություններ, Եր., ՀՀ պաշտոնական տեղեկագիր, հատուկ թողարկում, 21 դեկտեմբերի 2015, էջ 30–31:
[18] Տե՛ս Հայաստանի ազգային հաշիվները, 2011, էջ 104–106, 2012, էջ 116–118:

մասնավոր սեփականության բաժինը 2010-ին, 2005 թ. համեմատությամբ, ավելացել է 0.8 տոկոսային կետով և կազմել 64.3%, իսկ օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող սեփականությունը, համապատասխանաբար՝ 2.5 տոկոսային կետով: Ֆինանսական հատվածի ավելացված արժեքում օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող սեփականության բաժինը 2005 թ. 38.7%-ից 2010 թ. հատել է 50%-ի ցուցանիշը և կազմել 52.0%՝ այդ ժամանակահատվածում ավելանալով 13.3 տոկոսային կետով, հիմնականում ոչ թե պետական (1.5 տոկոսային կետով), այլ ազգային մասնավոր (14.9 տոկոսային կետով) սեփականության հաշվին: 2005 թ. հանքագործական արդյունաբերության 89.1%-ը գտնվել է օտարերկրյա վերահսկողության տակ, 2010-ին՝ 96.6%-ը (պետական մասը, համապատասխանաբար՝ 2.3% և 0%): «Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում» տնտեսական գործունեության տեսակում օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող սեփականության ենթահատվածի բաժինը 2005 թ. 62.0%-ից 2010 թ. հասել է 67.5%-ի: Սեփականության ընդհանուր կառուցվածքում օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող սեփականության հսկիչ ծրարի բաժինը 2010 թ. դրությամբ (բացի վերը նշված տնտեսական գործունեության տեսակներից) մեծ է եղել նաև «Տրանսպորտում և կապում» (64.0%): 2010 թ. պետական սեփականության բաժինը մեծ է եղել կրթության ոլորտում (82.8%), առողջապահության և սոցիալական ծառայությունների մատուցման ոլորտում՝ 62,6%: Ակնհայտ է, որ օտարերկրյա կապիտալը հիմնականում ձեռք է բերել ՀՀ տնտեսության բարձր եկամտաբերության (շահութաբերության) և բարձր ստվերայնության մակարդակ ունեցող տնտեսական գործունեության տեսակները: Ազգային մասնավոր կապիտալը բավարարվել է երկրորդ տեղով, իսկ սոցիալական զգալի բեռ ունեցող ոլորտները մնացել են որպես պետական սեփականություն:

2012 թ. ՀՀ-ում տնտեսական գործունեության 19 տեսակներից օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող տեսակների թիվը (երբ այդ սեփականության բաժինը ընդհանուրում կեսից ավելին է) կազմել է 6, պետական սեփականության համապատասխան ցուցանիշը՝ 3, մնացածում հսկիչ ծրարը գտնվում է ազգային մասնավոր ենթահատվածում[19]: Պետական սեփականության բաժինը մեծ է «Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» տնտեսական գործունեության տեսակում (ընդհանուր սեփականության 37.0%-ը), «Առողջապահության և բնակչության սոցիալական սպասարկում»՝ 35.7%, «Կրթություն»՝ 15.0%, «Շինարարություն»՝ 1.9%: Ընդհանուր առմամբ, 2012 թ. ՀՀ ոչ ֆինանսական հատվածի ավելացված արժեքի 8.8%-ը բաժին է ընկել պետական, 62.3%-ը՝ ազգային մասնավոր, իսկ 28.9%-ը՝ օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող ենթահատվածներին: Այդ ցուցանիշները ֆինանսական հատվածում կազմել են, համապատասխանաբար՝ 10.8%, 39.5% և 49.7%:

ՀՀ ոչ ֆինանսական և ֆինանսական կազմակերպությունների հատվածների համախառն ավելացված արժեքն ըստ սեփականության ենթահատվածների և դրանց կառուցվածքը բերված է աղյուսակ 1-ում: Եթե 2000 թ. ոչ ֆինանսական և ֆինանսական կազմակերպությունների հատվածներում ոչ

[19] Տե՛ս նույն տեղը, 2014, էջ 95–100: Ազգային հաշիվների մեթոդաբանության փոփոխության պատճառով ՀՀ ԱՎԾ «Հայաստանի ազգային հաշիվները, 2015» վիճակագրական ժողովածուն չի հրապարակվել:

ֆինանսական հատվածի բաժինը կազմել է 97.1%, իսկ ֆինանսական կազմակերպությունների հատվածինը՝ 2.9%, ապա այդ ցուցանիշները 2012 թ. կազմել են, համապատասխանաբար՝ 91.6% և 8.4%:

Աղյուսակ 1

Հայաստանի Հանրապետության ՀՆԱ կառուցվածքն ըստ համապատասխան հատվածների և վերահսկողության հատկանիշի, %-ով՝ ընդամենի նկատմամբ

ՀՀ	Կառուցվածքային հատվածներ	Բաշխվածությունն ըստ վերահսկողության հատկանիշի			Ընդամենը	Բաշխվածությունն ըստ վերահսկողության հատկանիշի			Ընդամենը
		պետական	ազգային մասնավոր	օտարերկրյա վերահսկողության տակ		պետական	ազգային մասնավոր	օտարերկրյա վերահսկողության տակ	
1	2	3	4	5	6	7	8	9	10
		2000				2012			
1	Ոչ ֆինանսական կազմակերպություններ (կորպորացիաներ)	20.4 62.0	63.4 63.3	16.2 94.3	100.0 66.5	8.8 33.5	62.3 49.4	28.9 86.5	100.0 53.9
2	Ֆինանսական կազմակերպություններ (կորպորացիաներ)	42.4 3.8	24.4 0.7	33.2 5.7	100.0 2.0	10.8 3.8	39.5 2.9	49.7 13.5	100.0 4.9
3	Պետական կառավարման մարմիններ	100.0 34.2	- -	- -	100.0 7.5	100 62.7	- -	- -	100.0 8.8
4	Տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպություններ (ՏՏՍՈԱԿ)	- -	100.0 0.2	- -	100.0 0.1	- -	100.0 0.5	- -	100.0 0.3
5	Տնային տնտեսություններ	- -	100.0 35.8	- -	100.0 23.9	- -	100.0 47.2	- -	100.0 32.1
6	Ավելացված արժեք (համախառն, հիմնական գներով)	21.9 100.0	66.7 100.0	11.4 100.0	100.0 100.0	14.1 100.0	67.9 100.0	18 100.0	100.0 100.0

Ծանոթագրություն. համարիչում՝ ՀՆԱ կառուցվածքն ըստ հատվածների, հայտարարում՝ ըստ վերահսկողության հատկանիշի:

Աղբյուրը. կազմվել և հաշվարկվել է՝ ըստ Հայաստանի ազգային հաշիվները, Եր., ՀՀ ԱՎԾ, 2006, էջ 107–118, 2008, էջ 108–111, 2011, էջ 124–125, 2014, էջ 101–111:

Հայաստանի Հանրապետությունում էլեկտրաէներգիա արտադրող ակտիվները պատկանում են ինչպես պետությանը, այնպես էլ մասնավոր անձանց:

Կապիտալը, ըստ ներգրավման աղբյուրների, ընդունված է տարանջատել պետական, ազգային մասնավոր (հայրենական) և օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող տեսակների: Վերջինս, որպես կանոն, ներկայացնում է տվյալ երկրի համար ոչ ռեզիդենտ համարվող անձանց կողմից ներդրված կապիտալը՝ տվյալ երկրում գործող կազմակերպություններում: Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի համար կապիտալի տվյալ դասակարգումը արդիական է, քանի որ բանկային համակարգում ար-

տասահմանյան կապիտալի տեսակարար կշիռը բավական մեծ է: Համաձայն մեր կողմից կատարված վերլուծությունների՝[20] 2010 թվականի հունիսի 31-ի դրությամբ արտասահմանյան կապիտալի տեսակարար կշիռը Հայաստանի Հանրապետության բանկային համակարգում կազմել է 78%: Ըստ այդմ՝ կարելի է կատարել մի շարք եզրահանգումներ.

- ՀՀ բանկային համակարգը դիտարկվում է փակ, քանի որ 21 բանկերից միայն «Արարատբանկը» և «Զարգացման հայկական բանկը» բաց բաժնետիրական ընկերության կարգավիճակ ունեն, իսկ մնացածները՝ փակ բաժնետիրական ընկերության («Պրոմեթեյ բանկը»՝ ՍՊԸ),
- 21 բանկերից 11-ը (կեսից ավելին) ամբողջությամբ (100%) արտասահմանյան կապիտալով են, մնացած 10-ը՝ խառը,
- օտարերկրյա և ազգային կապիտալով «խառը» 10 բանկերից 7-ում հայրենական կապիտալի տեսակարար կշիռը բանկի կանոնադրական կապիտալում գերազանցում է դրա 50%-ը («Արարատբանկ», «Արդշինինվեստբանկ», «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ», «Ինեկոբանկ», «Զարգացման հայկական բանկ», «Պրոմեթեյ բանկ», «Հայէկոնոմբանկ»), իսկ մնացած 3-ում («Արցախ բանկ», «Կոնվերս բանկ», «Հայբիզնեսբանկ») պակաս է 50%-ից,
- ազգային կապիտալի տեսակարար կշիռը բանկի կանոնադրական կապիտալում ամենաբարձրն է «Պրոմեթեյ բանկում» (ավելի քան 80%) և «Արդշինինվեստբանկում» (շուրջ 80%), իսկ ամենացածրը՝ «Կոնվերս բանկում» (մինչև 5%) և «Արցախ բանկում» (մինչև 10%),
- բաց բաժնետիրական ընկերության կարգավիճակ ունեցող երկու բանկերի(«Արարատբանկ», «ՀայէկոնոմԲանկ») ազգային կապիտալի տեսակարար կշիռը բանկի կանոնադրական կապիտալում գերազանցում է դրա 50%-ը:

Աղյուսակ 2-ում բերված է ՀՀ ֆինանսական հատվածի ընդհանուր կապիտալը, կանոնադրական կապիտալը և դրա կառուցվածքն ըստ վերահսկողության ենթահատվածների: Ներկայացված տվյալներն ակներև են դարձնում բանկային համակարգի գերակշիռ բաժինը (97.45%) ֆինանսական հատվածում (գծանկար 1):

Հանրապետության համախառն ներքին արդյունքը հիմնական գներով, հաշվի առած կառուցվածքային հատվածները, ներկայացված է ստորև:

ՀՀ հիմնական գներով ՀՆԱ կառուցվածքային հատվածների վերաբերյալ[21] տվյալներից երևում է, որ հանրապետության ՀՆԱ-ն 2000 թ. բաշխվել է ըստ պետական, ազգային մասնավոր և օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող հատկանիշի, համապատասխանաբար՝ 21,9%, 66.7% և 11,4%, 2004-ին՝ 15,6%, 69,6% և 14,8% համամասնությամբ: Այդ հարաբերակցությունը 2008-ին կազմել է, համապատասխանաբար՝ 11,6%, 71,3% և 17,1%, իսկ 2012-ին՝ 14.1%, 67,9% և 18.0%: Հեշտ է նկատել, որ 2000–2012 թթ. ՀՆԱ բաժինը պետական մասում նվազել է 7,8 տոկոսային կետով, ինչի հաշվին 1,2 տոկոսային կետով ավելացել են ազգային մասնավորի և 6,6 տոկոսային կետով՝ օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող մասերի բաժինները:

---

[20] Վերլուծության համար որպես հիմք է ծառայել www.banks.am կայքը:

[21] Տե՛ս Հայաստանի ազգային հաշիվները, Եր., ՀՀ ԱՎԾ, 2014, էջ 101–111, 2008, էջ 105–107, 2006, էջ 107–109:

Աղյուսակ 2

ՀՀ ֆինանսական հատվածի ընդհանուր կապիտալը, կանոնադրական կապիտալը և դրա կառուցվածքն ըստ վերահսկողության ենթահատվածների՝ 01.01.2016 թ. դրությամբ

ՀՀ	Ֆինանսական ենթահատվածներ	Ընդհանուր կապիտալ	Կանոնադրական կապիտալ	Բաշխվածությունն ըստ վերահսկողության հատկանիշի		
				պետական	ազգային մասնավոր	օտարերկրյա վերահսկողության տակ
1	Ընդամենը, այդ թվում՝	707856000.0	454281931	82839470.0	121508879.0	249933582.0
		100.0	100.0	100.0	100.0	100.0
1.1	Բանկային համակարգ, այդ թվում՝	690469773.0[1]	440163671	81339470.0	117279879.0	241544322.0
		97.54[2]	100.00	98.19	96.52	96.64
1.1.1	Առևտրային բանկեր	514049000.0	336828816.0	7500000.0	101397464.0	227931352.0
		72.62	100.00	2.23[3]	30.10	67.67
		-	-	9.05[4]	83.44	91.20
1.1.2	Վարկային կազմակերպություններ	176420773.0	103334855.0	73839470.0	15882415.0	13612970.0
		24.92	100.00	71.46	15.37	13.17
		-	-	89.14	13.07	5.45
1.2	Ապահովագրական համակարգ	17386227.0	14118260.0	1500000.0	4229000.0	8389260.0
		2.46	100.00	10.62	29.95	59.42
		-	-	1.81	3.48	3.36

Ծանոթագրություն. 1. հազ. ԱՄՆ դոլար, 2. ընդհանուր կապիտալի նկատմամբ՝ %-ով, 3. կանոնադրական կապիտալի նկատմամբ՝ %-ով, 4. ըստ վերահսկողության հատկանիշի ենթահատվածի ընդամենի նկատմամբ՝ %-ով:

Աղբյուրը. կազմվել և հաշվարկվել է ըստ www.banks.am-ի



Գծանկար 1. ***ՀՀ-ում գործող ֆինանսական կազմակերպությունների կանոնադրական կապիտալների կառուցվածքն ըստ վերահսկողության հատկանիշի՝ 01.01.2016 թ. դրությամբ***

ՀՆԱ պետական բաժնեմասի ամենամեծ փոփոխությունը 2008-ին, 2004 թ. համեմատությամբ, նկատվել է ոչ ֆինանսական կազմակերպությունների (կորպորացիաների) հատվածում. 8,9%-ից նվազել է՝ հասնելով 3,8%-ի (նվազման չափը կազմել է 5,1 տոկոսային կետ): Նույն ժամանակահատվածում ֆինանսական կազմակերպությունների (կորպորացիաների) հատվածում պետական բաժնեմասը 0,3%-ից հասել է 1,1%-ի (աճը՝ 0,8 տոկոսային կետ), իսկ պետական կառավարման մարմինների բաժինը 6,4%-ից հասել է 6,7%-ի (աճը՝ 0,3 տոկոսային կետ): Ոչ ֆինանսական կազմակերպությունների (կորպորացիաների) հատվածում ազգային մասնավոր վերահսկողության մասում ստեղծված ՀՆԱ բաժինը նշված ժամանակահատվածում 41,5%-ից հասել է 39,4%-ի (նվազումը՝ 2,1 տոկոսային կետ), ֆինանսական (կորպորացիաների) հատվածում ազգային մասնավոր բաժինը 0,7%-ից հասել է 1,5%-ի (աճը՝ 0,8 տոկոսային կետ), իսկ տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների հատվածում ազգային մասնավորի բաժինը 0,1%-ից հասել է 0,2%-ի (աճը՝ 0,1 տոկոսային կետ):

Աղյուսակ 3

Հայաստանի Հանրապետության ՀՆԱ-ն ըստ հատվածների և վերահսկողության հատկանիշի՝ 2000 և 2012 թվականներին

ՀՀ	Կայուն գնագրային հատվածներ	Բաշխվածությունն ըստ վերահսկողության հատկանիշի			Ընդամենը	Բաշխվածությունն ըստ վերահսկողության հատկանիշի			Ընդամենը
		պետական	ազգային մասնավոր	օտարերկրյա վերահսկողության տակ		պետական	ազգային մասնավոր	օտարերկրյա վերահսկողության տակ	
1	2	3	4	5	6	7	8	9	10
		2000				2012			
1	Ոչ ֆինանսական կազմակերպություններ	123624.713.0	405582.342.6	104881.311.0	634088.366.5	172048.34.7	1225214.933.6	569152.815.6	1966416.053.9
2	Ֆինանսական կազմակերպություններ	7936.20.8	4576.50.5	6219.70.7	18732.42.0	19330.80.6	70996.31.9	89171.02.4	179498.14.9
3	Պետական կառավարման մարմիններ	71461.27.5	-	-	71461.27.5	322029.88.8	-	-	322029.88.8
4	Տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպություններ (ՏՏՍՈԱԿ)	-	1151.10.1	-	1151.10.1	-	12311.40.3	-	12311.40.3
5	Տնային տնտեսություններ	-	227657.923.9	-	127657.923.9	-	1171245.332.1	-	1171245.332.1
6	Ավելացված արժեք (համախառն, հիմնական գներով)	203022.121.3	638967.867.0	111101.011.7	953090.9100.0	513408.914.1	2479767.967.9	658323.818.0	3651500.6100.0

* Համարիչում՝ մլն դրամ (հիմնական գներով), հայտարարում՝ տոկոսներով (ընդամենի նկատմամբ):

Աղբյուրը. կազմվել և հաշվարկվել է ըստ՝ Հայաստանի ազգային հաշիվները, Եր., ՀՀ ԱՎԾ, 2014, էջ 101–110, 2010, էջ 119–128, 2008, էջ 101–105, 2006, էջ 109–117:

2004-ին ՀՀ ՀՆԱ 64,5%-ը ստեղծվել է ոչ ֆինանսական կազմակերպություններում, 6,4%-ը՝ պետական կառավարման մարմիններում, 1,7%-ը՝ ֆինանսական կազմակերպություններում, 0,1%-ը՝ տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպություններում, 27,3%-ը՝ տնային տնտեսություններում: Նշված ցուցանիշների մեծությունները 2008 թ. կազմել են, համապատասխանաբար՝ 59,1% (նվազումը՝ 5.4 տոկոսային կետ), 3.8% (աճը՝ 2,1 տոկոսային կետ), 6,7% (աճը՝ 0,3 տոկոսային կետ), 0,2% (աճը՝ 0,1 տոկոսային կետ), 30,2% (աճը՝ 2,9 տոկոսային կետ):

Աղյուսակ 3-ում բերված է ՀՀ ՀՆԱ-ն ըստ հատվածների և վերահսկողության հատկանիշի՝ 2000 և 2012 թվականներին: Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող ՀՆԱ-ն 2000 թ. 111.1 մլրդ դրամից (ամբողջ ՀՆԱ 11.7%-ը) 2012 թ. հասել է 658,3 մլրդ դրամի (18,0%): Եթե նկատի ունենանք, որ օտարերկրյա կապիտալի ընդլայնման հնարավորությունները ՀՀ տնտեսության պետական կառավարման, տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների և տնային տնտեսությունների հատվածներում խիստ սահմանափակ են (մինչև օրս այդ հատվածներում օտարերկրյա կապիտալի բաժինը գործնականում հավասար է զրոյի), օտարերկրյա կապիտալի ընդլայնման համար մնում են երկու՝ ոչ ֆինանսական կազմակերպությունների (կորպորացիաների) և ֆինանսական կազմակերպությունների (կորպորացիաների) հատվածները: Եթե դատելու լինենք 2012 թ. տվյալներով, ապա ոչ ֆինանսական կազմակերպությունների (կորպորացիաների) հատվածում պետական մնացած 33,5%-ը կարող է բաշխվել ազգային մասնավոր և օտարերկրյա կապիտալների միջև, իսկ ֆինանսական կազմակերպությունների (կորպորացիաների) հատվածում այդ հնարավորությունն ավելի սահմանափակ է և կազմում է պետական վերահսկողության տակ գտնվող ՀՆԱ ընդամենը 10.8%-ը:

Օգտագործված գրականություն

1. Հայաստանի Հանրապետության սահմանադրություն, Եր., «Նաիրի», 1995, «Տիգրան Մեծ», 2005:
2. Հայաստանի Հանրապետության սահմանադրության փոփոխություններ, Եր., ՀՀ պաշտոնական տեղեկագիր, հատուկ թողարկում, 21 դեկտեմբերի 2015:
3. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2010–2016 թթ. հունվար-դեկտեմբերին, Տեղեկատվական ամսական զեկույց, Եր., ՀՀ ԱՎԾ, 2011-2016:
4. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., ՀՀ ԱՎԾ, 2014, 2015:
5. Հայաստանի Հանրապետության արտաքին հաշիվները, Եր., ՀՀ ԱՎԾ, 2015:
6. Հայաստանի ազգային հաշիվները, Եր., ՀՀ ԱՎԾ, 2003, 2006, 2008–2014:
7. Ա. Մարկոսյան, Գ. Նազարյան, Դ. Հախվերդյան, Միջազգային տնտեսական հարաբերություններ: Ուսումնական ձեռնարկ երկու մասով, Եր., ԵՃՇՊՀ, 2012:
8. Դ. Հախվերդյան, Է. Համբարձումյան, Միջազգային կորպորացիաներ, Եր., «Տնտեսագետ», 2015:
9. www.banks.am կայքը:

АШОТ МАРКОСЯН
Заместитель начальника Управления по управлению государственным имуществом при Правительстве РА,
доктор экономических наук, профессор

БОРИС АВАКЯН
Кандидат экономических наук

Вызовы, связанные с соотношением национального и иностранного капиталов в Республике Армения.– Интеграция мировой экономики и углубление сотрудничества между странами проявляется в том числе во взаимопроникновении капиталов и совмещении иностранного и отечественного капиталов в одной экономике. В открытой “малой” экономике, какой является и экономика Республики Армения, привлечение иностранного капитала приводит как к положительным, так и к отрицательным результатам. Суммарно такие результаты становятся вызовами для экономического развития. По этой причине необходимо достичь такого соотношения иностранного и отечественного капиталов, при котором можно будет обеспечить наибольший положительный результат для всех сотрудничающих сторон.

В статье проанализирована секторальная структура ВВП РА, а также структура ВВП по признаку подконтрольности государственному, частному национальному и иностранному капиталам. Дана оценка возможному изменению структуры и соотношения капиталов.

Ключевые слова: *национальный капитал, иностранный капитал, государственная организация, национальная частная организация, организация, находящаяся под контролем иностранных субъектов.*
JEL: F20, F21, F36, F39, E22

ASHOT MARKOSYAN
Deputy Head of State Property Management Department by the Government of the RA,
Doctor of Economics, Professor

BORIS AVAGYAN
PhD in Economics

The Challenges of National and Foreign Capitals Ratio in the Republic of Armenia.– Integration into the world economy and the deepening of cooperation is also reflected in the field of national and foreign capital penetration and their joint activities. Foreign capitals in the Republic of Armenia, with a "small" and open economy, have both positive and negative aspects, which as a result turn into challenges for the economic devolopment.

For this reason a proper relationship between the foreign and home capitals should be achieved so as to provide the best possible result for all cooperating parties.

The GDP sectorial structure and distribution according to quality control (state, national, private and foreign) have been considered in the given paper, as well as the evaluation of possible changes and their correlations.

Key words: *national capital, foreign capital, state organization, national private organization, organization under foreign control.*

JEL: F20, F21, F36, F39, E22